Հաստատված է

09.06.2026թ. տարեկան ժողովի

թիվ 15 արձանագրության

Նախագահ Ա.Բազիկյան

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Մենք՝ «ՀՀ Լիզինգատուների Ասոցիացիա» հասարակական կազմակերպության անդամներս, ճանաչելով յուրաքանչյուր անդամ կազմակերպության անկախությունն ու ինքնուրույնությունը, հարգելով սեփական դիրքորոշումը պաշտպանելու իրավունքը՝ անգամ այն դեպքում, երբ այն կարող է տարբերվել Ասոցիացիայի այլ անդամների կարծիքից, և լիովին գիտակցելով Ասոցիացիային միանալով ստանձնած պատասխանատվությունը, կամավոր կերպով պարտավորվում ենք մեր գործունեության ընթացքում առաջնորդվել Էթիկայի կանոնագրքով (այսուհետ՝ Կանոնագիրք) սահմանված հիմնական սկզբունքներով և դրույթներով:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լիզինգատուների Ասոցիացիան (այսուհետ՝ Ասոցիացիա) շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որի գործունեությունը միտված է լիզինգի ոլորտի համակարգային զարգացմանը, Հայաստանի լիզինգատուների շահերի ներկայացմանը տարբեր պետական և մասնավոր հարթակներում, ինչպես նաև լիզինգի վերաբերյալ ճանաչողության և իրազեկվածության բարձրացմանը՝ նպաստելով ՀՀ տնտեսության կայուն աճին:

Ասոցիացիան կամավոր անդամակցության սկզբունքով գործող մասնագիտական միավորում է, որը համախմբում է լիզինգային ընկերություններին, սարքավորումների և տեխնիկայի մատակարարներին, խորհրդատվական և ապահովագրական կազմակերպություններին, ինչպես նաև ոլորտի զարգացման գործընթացում ներգրավված այլ շահակիցներին՝ ձևավորելով համագործակցության և փոխադարձ պատասխանատվության միասնական միջավայր:

Ասոցիացիայի առաքելությունը և նպատակները:

Ասոցիացիայի առաքելությունն է նպաստել Հայաստանի լիզինգային ոլորտի կայուն և համակարգված զարգացմանը՝ ապահովելով ոլորտի հուսալիությունն ու թափանցիկությունը, բարձրացնելով լիզինգի գործիքի արդյունավետությունն ու հասանելիությունը տնտեսավարող սուբյեկտների համար, աջակցելով օրենսդրական և կանոնակարգային բարեփոխումներին, ներկայացնելով և պաշտպանելով անդամ կազմակերպությունների շահերը պետական և մասնավոր հարթակներում, ինչպես նաև ձևավորելով ոլորտի նկատմամբ վստահություն և բարձր իրազեկվածություն: Միաժամանակ Ասոցիացիան կարևորում է միջազգային համագործակցությունը և ձգտում է լիզինգային շուկայի զարգացումը համապատասխանեցնել համաշխարհային լավագույն փորձին: Ասոցիացիայի հիմնական նպատակներն են.

Ասոցիացիայի հիմնական նպատակներն են՝

- Ներկայացնել և պաշտպանել Հայաստանի լիզինգատուների շահերը պետական քաղաքականություն մշակող և իրականացնող մարմիններում, ինչպես նաև այլ կազմակերպություններում:
- Ձևավորել բարենպաստ և կանխատեսելի միջավայր լիզինգային գործարքների բոլոր մասնակիցների համար, բացահայտել ոլորտային խնդիրները և մշակել դրանց համատեղ լուծումներ:
- Բարձրացնել հանրային իրազեկվածությունը լիզինգի վերաբերյալ, հետևել միջազգային շուկայի զարգացման միտումներին և նպաստել դրանց կիրառմանը հայկական շուկայում:
- Խթանել լիզինգի դերը ներդրումային գործընթացներում՝ նպաստելով ՀՀ տնտեսության աճին և մրցունակության բարձրացմանը:
- Կազմակերպել մասնագիտական վերապատրաստումներ և աջակցել միջազգային փորձին համահունչ նորարարական լիզինգային լուծումների ներդրմանը:
- Մասնակցել պետական աջակցության և սուբսիդավորման ծրագրերին, աջակցել նոր ֆինանսական գործիքների և միջոցների ներգրավմանը:
- Հավաքագրել, համակարգել և ներկայացնել ոլորտի վիճակագրական և վերլուծական տվյալներ՝ որոշումների կայացման գործընթացին աջակցելու նպատակով:
- Նպաստել միջազգային կազմակերպությունների ծրագրերի իրականացմանը Հայաստանում՝ ուղղված լիզինգային շուկայի զարգացմանը:
- Աջակցել լիզինգային ոլորտի օրենսդրական և կանոնակարգային բարեփոխումներին և զարգացնել արդյունավետ համագործակցություն պետական մարմինների հետ:

Ասոցիացիայի գործունեության նպատակն է համակարգել իր կազմի մեջ մտնող կազմակերպությունների գործունեությունը լիզինգային հարաբերությունների ձևավորման և

զարգացման գործընթացում՝ ՀՀ տարածքում և դրա սահմաններից դուրս ներդրումային գործընթացների ակտիվացման նպատակով, ինչպես նաև ներկայացնել և պաշտպանել անդամների ընդհանուր ֆինանսական, գույքային, մտավոր և այլ օրինական շահերն ու իրավունքները:

Ասոցիացիայի գործունեությունն ուղղված է՝

- Անդամ կազմակերպությունների գործունեության համակարգմանը և լիզինգի ոլորտում նրանց միջև գործարար կապերի զարգացմանն ու ամրապնդմանը,
- Պետական մարմիններում, տնտեսական, առևտրային, հասարակական և այլ կազմակերպություններում անդամների շահերի և իրավունքների ներկայացմանը և պաշտպանությանը,
- Միջազգային կազմակերպությունների և մասնագիտական միավորումների հետ համագործակցության զարգացմանը,
- Լիզինգի ծառայությունների որակի բարձրացման նպատակով միասնական ստանդարտների և գործելակերպի մշակմանը և ներդրմանը,
- Լիզինգի շուկայի վիճակագրական և վերլուծական տեղեկատվության հավաքագրմանը, համակարգմանը և հրապարակմանը,
- Լիզինգային ոլորտի օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի բարելավմանը նպաստելուն,
- Հանրային իրազեկվածության և ճանաչողության բարձրացմանը՝ սեմինարների, գիտաժողովների, ցուցահանդեսների և գործնական հանդիպումների կազմակերպման միջոցով, ինչպես նաև ոլորտի մասնագետների վերապատրաստմանը և փորձի փոխանակմանը:

ՄԱՍ I: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԶԻՆԳԱՏՈՒՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԷԹԻԿԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ և ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Սույն Կանոնագրքի նպատակն է՝

- Վկայել Ասոցիացիայի անդամների նվիրվածությունն ու հավատարմությունը բարձր էթիկական վարքագծի չափանիշներին,
- Նպաստել լիզինգի ոլորտում էթիկական մշակույթի բարձրացմանը՝ ձևավորելով օրինակելի գործելակերպ այլ մասնակիցների համար:

Ասոցիացիան իր գործունեության ընթացքում առաջնորդվում է օրինականության, հավասարության, խտրականության բացառման, բարեխղճության, ազնվության, անաչառության, արդարության և թափանցիկության սկզբունքներով:

Էթիկական վարքագիծը չի սահմանափակվում միայն օրենսդրության պահանջների պահպանմամբ, այլ ենթադրում է պատասխանատու և սկզբունքային գործելակերպ՝ մասնագիտական գործունեության բոլոր փուլերում:

Էթիկայի կանոնագրքով ամրագրված դրույթների պահպանումը պարտադիր է Ասոցիացիայի անդամ բոլոր կազմակերպությունների համար և տարածվում է այդ կազմակերպությունների բոլոր աշխատակիցների վրա:

Իր գործունեությունն իրականացնելիս Ասոցիացիան՝

- պահպանում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջները, ինչպես նաև միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքներն ու նորմերը,
- հարգում և պաշտպանում է մարդու իրավունքները,
- գործում է բարեխղճորեն, անաչառ և արդարացի կերպով՝ բացառելով և չհանդուրժելով կոռուպցիոն բնույթի որևէ դրսևորում կամ նմանատիպ գործելակերպ:

ՄԱՍ II. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ՝ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԵՎ ԱՅԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ասոցիացիայի անդամները պարտավորվում են՝

1.1 Հրապարակայնորեն գնահատականներ չինչեցնել գործընկերների գործունեության վերաբերյալ, չիրականացնել վարկանիշավորում կամ այլ գնահատման գործընթացներ՝ դրանք դիտարկելով բացառապես անկախ փորձագետների իրավասության տիրույթում:

1.2 Հարգանքով և գործընկերային վերաբերմունքով վերաբերվել Ասոցիացիայի մյուս անդամներին:

1.3 Աջակցել միմյանց մասնագիտական համայնքում և զանգվածային լրատվամիջոցներում, սատարել Ասոցիացիայի կազմում գործող կազմակերպությունների միջև կառուցողական համագործակցությանը, համատեղ նախագծերին և նախաձեռնություններին, ինչպես նաև խրախուսել և նպաստել անդամների միջև արդյունավետ հաղորդակցությանը:

1.4 Գործունեության ընթացքում առաջնորդվել հավասարության և փոխադարձ հարգանքի սկզբունքներով:

1.5 Ճանաչել և հարգել Ասոցիացիայի ժողովի որոշումների և հեղինակության կարևորությունը:

1.6 Պատշաճ և ժամանակին կատարել ստանձնած պարտավորությունները, ապահովել տեղեկատվության տրամադրման և հարցումների պատասխանման թափանցիկ ու պատասխանատու ընթացակարգը:

1.7 Փոխհարաբերությունները կառուցել հարգանքի, վստահության, նրբանկատության և բարյացակամության հիման վրա՝ բացառելով խտրականությունն ու անբարեխիղճ մրցակցությունը:

1.8 Շարունակաբար կատարելագործել մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները՝ ներառյալ գործընկերների հետ փորձի փոխանակման միջոցով:

1.9 Չդրդել Ասոցիացիայի անդամ կազմակերպությունների աշխատակիցներին տեղափոխվել սեփական կազմակերպություն՝ առանց այդ մտադրության վերաբերյալ տվյալ աշխատակցի գործող գործատուի ղեկավարությանը նախապես տեղեկացնելու:

1.10 Չձեռնարկել Ասոցիացիայի անդամ հանդիսացող մրցակիցների գույքի, այդ թվում՝ տեղեկատվական և մտավոր սեփականության յուրացման ուղղակի կամ անուղղակի փորձեր:

1.11 Պահպանել առավելագույն կոռեկտություն այն դեպքերում, երբ հաճախորդի հայտը միաժամանակ դիտարկվում է Ասոցիացիայի մեկ այլ անդամ կազմակերպության կողմից:

1.12 Անբարեխիղճ մրցակցության դեպքերի մասին գրավոր տեղեկացնել Ասոցիացիային՝ ապահովելով դրանց քննարկումը Ասոցիացիայի անդամների ժողովում:

1.13 Անդամ կազմակերպությունների միջև ծագած վիճահարույց հարցերը նախ և առաջ փորձել լուծել Ասոցիացիայի շրջանակներում՝ երկխոսության և կառուցողական համագործակցության միջոցով:

Գործընկեր-աշխատակիցների և գործընկերների կազմակերպությունների հետ հարաբերությունները

Ասոցիացիայի անդամները կարևորում են գործընկեր-աշխատակիցների և գործընկեր կազմակերպությունների հետ կառուցված երկարաժամկետ, կայուն և փոխշահավետ հարաբերությունները՝ հիմք ընդունելով փոխադարձ վստահությունը, հարգանքը, ազնվությունն ու արդարությունը:

Ասոցիացիան խրախուսում է իր գործընկերներին և համագործակիցներին առաջնորդվել Ասոցիացիայի կողմից ընդունված էթիկական սկզբունքներով և վարքագծի չափանիշներով՝ ձևավորելով պատասխանատու և արժեհամակարգային համագործակցության միջավայր:

Հաճախորդների հետ հարաբերությունները:

Ասոցիացիայի անդամները պարտավորվում են՝

1. Մատուցել բարձր որակի ծառայություններ՝ առաջնահերթ դիտարկելով հաճախորդների կարիքների լիարժեք և պատասխանատու բավարարումը:
2. Պատշաճ և բարեխղճորեն կատարել ստանձնած պայմանագրային պարտավորությունները՝ արժևորելով երկարաժամկետ և կայուն գործարար հարաբերությունները:
3. Ապահովել հաճախորդներից ստացված տեղեկատվության գաղտնիությունը՝ բացառելով հաճախորդի շահերին վնաս հասցնող որևէ տվյալների բացահայտում կամ ոչ իրավաչափ օգտագործում:

Պետական մարմինների հետ հարաբերությունները

Ասոցիացիայի անդամները ձգտում են պետական մարմինների հետ ձևավորել և պահպանել կառուցողական, թափանցիկ և էթիկական սկզբունքներին համահունչ հարաբերություններ՝ առաջնորդվելով օրինականության, փոխադարձ հարգանքի և պատասխանատվության սկզբունքներով: Իր նպատակների իրագործման ընթացքում Ասոցիացիայի Նախագահը և անդամները ցուցաբերում են բացարձակապես չեզոք քաղաքական դիրքորոշում՝ անկախ իրենց քաղաքական հայացքներից և կողմնորոշումներից, գործում են իրենց լիակատար ազատ և անկաշկանդ կամաարտահայտմամբ և Ասոցիացիայի կանոնադրության շահերից ելնելով:

Հասարակության հետ հարաբերությունները

Ասոցիացիան իրեն դիտարկում է որպես այն սոցիալական միջավայրի անբաժանելի մաս, որի շրջանակում գործում է, և ձգտում է հասարակության հետ հաստատել կայուն ու վստահելի հարաբերություններ՝ հիմնված հարգանքի, ազնվության, արդարության և բաց հաղորդակցության վրա:

Ասոցիացիայի անդամները պարտավորվում են դրսևորել հարգալից և պատասխանատու վերաբերմունք իրենց մասնագիտության, Ասոցիացիայի մյուս անդամների, գործընկերների և հաճախորդների նկատմամբ՝ պահպանելով բարձր մասնագիտական և բարոյական չափանիշներ:

ՄԱՍ III: ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ /ԽԹԱՆՈՒՄ, ՏԱՐԱԾՈՒՄ, ԽՐԱԽՈՒՍՈՒՄ/

Լիզինգի գծով մասնագիտական գիտելիքների և փորձի տարածման և դրական կերպարի ձևավորման նպատակով Ասոցիացիայի անդամները պարտավորվում են՝

1. Նպաստել լիզինգային գործիքի վերաբերյալ դրական հասարակական ընկալման ձևավորմանը՝ պարզաբանելով լիզինգի տնտեսական, սոցիալական և էթիկական նշանակությունը հաճախորդներին, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին և լայն հանրությանը:
2. Զանգվածային լրատվամիջոցներում Ասոցիացիայի անունից հանդես գալ արժանապատիվ, պատշաճ և պատասխանատու ձևով: Վիճելի հարցերի դեպքում, եթե որևէ անդամ ունի անհատական դիրքորոշում, որը նախապես չի քննարկվել Ասոցիացիայի մյուս անդամների հետ, նա պարտավոր է այն ներկայացնել բացառապես որպես անձնական կարծիք՝ առանց Ասոցիացիայի անունը հիշատակելու կամ դրա հետ իրեն նույնացնելու:
3. Խուսափել այնպիսի գործողություններից կամ հայտարարություններից, որոնք կարող են վնասել Ասոցիացիայի անդամների և գործընկեր-աշխատակիցների մասնագիտական հեղինակությանը կամ հեղինակային վստահությանը:

ՄԱՍ IV: ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՆՈՐՄԵՐԸ ԽԱԽՏՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

1. Սույն Կանոնագրքի դրույթների խախտումը կարող է հիմք հանդիսանալ Ասոցիացիայի Նախագահի կողմից հարցի քննարկման համար: Նախագահը իրավասու է խախտման վերաբերյալ հարցը ներկայացնել Ասոցիացիայի Ընդհանուր ժողովի քննարկմանը՝ համապատասխան միջոցների կիրառման նպատակով, ներառյալ՝ Ասոցիացիայի անդամակցությունից զրկելը:
2. Եթե Կանոնագրքի դրույթները խախտում է Ասոցիացիայի անդամ կազմակերպությունը կամ դրա աշխատակիցը, Ասոցիացիան դիմում է տվյալ կազմակերպության հիմնադիրին կամ ղեկավարությանը՝ առաջարկելով կիրառել համապատասխան կարգապահական միջոցներ՝ հետագա նմանատիպ դեպքերը բացառելու նպատակով:
3. Հաճախորդները կարող են բողոքով դիմել Ասոցիացիայի Նախագահին՝ Ասոցիացիայի անդամների անբարեխիղճ կամ ոչ էթիկական վարքագծի վերաբերյալ և ստանալ օպերատիվ, անաչառ և հիմնավորված արձագանք:

Դիմումները կարող են ներկայացվել էլեկտրոնային փոստով՝ **info@leaseunion.am** հասցեին կամ բջջային հետևյալ հեռախոսահամարով՝ **+374 44 70 00 52**:

ՄԱՍ V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ասոցիացիայի անդամները անվերապահորեն ընդունում և պարտավորվում են պահպանել Ասոցիացիայի Կանոնադրության և Էթիկայի կանոնագրքի դրույթները:

Հայաստանի Լիզինգատուների Ասոցիացիայի անդամները պարտավորվում են տարածել և ամրապնդել վերը նշված էթիկական սկզբունքները մասնագիտական և գործարար հանրության շրջանակներում՝ նպաստելով պատասխանատու և բարձր չափանիշներին համահունչ գործելակերպի ձևավորմանը:

Սույն Կանոնագիրը կարող է ենթարկվել վերանայման և կատարելագործման: Այն հրապարակված է նաև համացանցում՝ www.leaseunion.am հասցեում և հասանելի է յուրաքանչյուր հետաքրքրված անձի համար: